



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 55336 գործարքներ, որոնց քանակը 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 23.2%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 12.2%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13047 օտարման գործարքների 77.2%-ը կազմել են առուվաճառքները, 22.2%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 36.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.3%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2011թ. չորրորդ եռամսյակում, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 3.4%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 9.6%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. չորրորդ եռամսյակում, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.0%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 7.3%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինագված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	չորրորդ եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2011թ.	երրորդ եռամսյակ 2011թ.
Կենտրոն	445300	438200	438200
Արաբկիր	361500	339000	340100
Քանաքեռ-Զեյթուն	278000	263800	263700
Նոր-Նորք	228000	229800	225000
Ավան	235800	243400	246100
Էրեբունի	242500	231200	235500
Շենգավիթ	240800	232500	225300
Դավթաշեն	265500	255500	258300
Աջափնյակ	227400	228800	222900
Մալաթիա-Սեբաստիա	228100	222700	225900
Նուբարաշեն	149100	142500	145300
<b>Միջինը Երևանում /բազի Նորք-Մարաշից/</b>	263800	257000	256900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել են 0.04%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1122 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 0.3%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 0.6%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինագված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2011թ.	երրորդ եռամսյակ 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	139600	118300	127100
	Ապարան	45900	51900	53200
	Թալին	57400	65700	63500
Արարատ	Արտաշատ	96900	93900	99300
	Մասիս	135400	108900	112600
	Վեդի	96100	94800	93500
	Արարատ	85000	76100	80800
Արմավիր	Վաղարշապատ	158200	141400	139400

	Արմավիր	126100	114000	116000
	Մեծամոր	84900	80900	79900
Գեղարքունիք	Սևան	94300	91900	90600
	Գավառ	48400	54500	53400
	Մարտունի	87000	98200	93200
	Վարդենիս	32000	33700	35900
	Ճամբարակ	20500	25000	24500
Լոռի	Վանաձոր	92000	84100	89800
	Ստեփանավան	59800	77100	72400
	Սպիտակ	83700	101100	93500
	Այավերդի	33600	43000	35600
	Տաշիր	37100	48900	46300
	Թումանյան	6200	13000	13000
	Շամլուղ	3400	9400	9000
	Ախթալա	14400	22300	21200
Կոտայք	Աբովյան	149800	144000	139000
	Նոր Հաճն	133300	128600	121700
	Բյուրեղավան	105900	104600	105500
	Եղվարդ	110300	112000	109300
	Հրազդան	62800	59600	60100
	Ծաղկաձոր	177300	236900	190800
	Չարենցավան	77300	77700	73200
Շիրակ	Գյումրի	117700	102600	106200
	Արթիկ	63100	63800	64800
	Մարալիկ	30300	37500	35700
Սյունիք	Գորիս	138800	119100	122100
	Կապան	103700	93900	99500
	Սիսիան	83700	83100	90200
	Մեղրի	61800	72200	73200
	Ագարակ	34500	44100	42400
	Քաջարան	61000	82200	70700
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71900	81200	81400
	Եղեգնաձոր	110700	117500	109400
	Ջերմուկ	121100	103700	118400
Տավուշ	Դիլիջան	106600	97000	105900
	Իջևան	132800	117400	122700
	Բերդ	42200	53100	50900
	Նոյեմբերյան	34400	42300	42200
	Այրում	24200	29200	30300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2011թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.1%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1479 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 361, մարզերում միասին վերցրած՝ 1118: 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 9.2%-ով, ընդ որում, Երևանում՝ 1.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.9%-ով: 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 9.2%-ով, ընդ որում Երևանում՝ 2.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.7%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագրված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/:

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	չորրորդ եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2011թ.	երրորդ եռամսյակ 2011թ.
Կենտրոն	476400	461700	454900
Արաբկիր	389700	370200	367000
Քանաքեռ-Զեյթուն	292700	277000	272300
Նորք-Մարաշ	279200	303600	290200
Ավան	250100	253400	249400
Էրեբունի	253200	230000	241600
Ծննդավիթ	256000	241900	235800
Դավթաշեն	280400	264200	271900
Աջափնյակ	245700	239000	235600
Մալաթիա-Սեբաստիա	244200	227900	234300
Նուբարաշեն	150700	145100	150100
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>283500</b>	<b>274000</b>	<b>273000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.4% :

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2011թ.	երրորդ եռամսյակ 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	146100	131200	131400
	Ապարան	49100	54700	55000
	Թալին	58800	69700	64600
Արարատ	Արտաշատ	101500	103000	106000
	Մասիս	139500	114000	116900
	Վեդի	100600	95900	96700
	Արարատ	89900	88800	85200
Արմավիր	Վաղարշապատ	166900	164000	160200
	Արմավիր	131300	116400	119400
Գեղարքունիք	Սևան	99200	94400	94500
	Գավառ	51400	50300	55100
	Մարտունի	90400	96900	94000
	Վարդենիս	34600	38400	39400
	Ճամբարակ	23000	28400	27400
Լոռի	Վանաձոր	98800	97300	98300
	Ստեփանավան	63600	79200	75100
	Սպիտակ	87200	108800	102000
	Ալավերդի	36400	40100	36800
	Տաշիր	40500	54100	50000
	Թումանյան	10800	13900	13600
	Շամլուղ	7500	11500	10500
	Ախթալա	18300	25000	22400
Կոտայք	Աբովյան	165700	152500	146000

	Նոր հաճն	137800	132400	129400
	Բյուրեղավան	110200	109100	107200
	Եղվարդ	118500	120500	115200
	Հրազդան	66850	66600	63900
	Ծաղկաձոր	318600	308300	313000
	Չարենցավան	81000	77300	75500
Շիրակ	Գյումրի	127500	118900	117500
	Արթիկ	64900	67700	67400
	Մարալիկ	32750	39800	37700
Սյունիք	Գորիս	144300	126900	130600
	Կապան	107500	100400	102400
	Սիսիան	86700	89100	93100
	Մեղրի	64050	76000	74200
	Ազարակ	35900	47500	44100
	Դաստակերտ	10500	10300	10500
Վայոց Ձոր	Վայք	75300	82700	83800
	Եղեգնաձոր	114100	118900	117500
	Ջերմուկ	123300	116800	121700
Տավուշ	Դիլիջան	112100	103900	109700
	Իջևան	138100	129500	132000
	Բերդ	44400	57800	53300
	Նոյեմբերյան	36100	46300	44800
	Այրում	26100	34300	31700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.8 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4404 միավոր /2461.61 հա/ հողեր, որից Երևանում՝ 281 միավոր /22.15 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2313 միավոր /2218.32 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /3.95 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1437 միավոր /162.41 հա/, որից Երևանում՝ 220 միավոր /16.70 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 522 միավոր /21.71 հա/, որից Երևանում՝ 41 միավոր /1.41 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 34 միավոր /24.21 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.10 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 73 միավոր /31.62 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 23 միավոր /3.04 հա/,
- ջրային հողեր՝ 2 միավոր /0.30 հա/:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 3819 միավորի /2206.12 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 242 միավոր /18.46 հա/, նվիրատվության գործարքներ՝ 547 միավոր /243.51 հա/, որից Երևանում՝ 35 միավոր /3.45 հա/ և փոխանակության գործարքներ՝ 38 միավոր /11.98 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.24 հա/:

Հանրապետությունում 2011թ. չորրորդ եռամսյակում, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.1%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 13.1%-ով,

արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 15.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 637.68 հա, որից 620.91 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 27.0% կամ 1030 գործարքներ /578.07 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 79 գործարքներ /6.49 հա/, իսկ 72.3% կամ 2760 միավորը /1574.34 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 161 միավոր /11.97 հա/: 2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 29 գործարք /53.71 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.03	65	5.98	13	0.48	11	3.29	3	0.06	123	7.74	24	0.88
Արագածոտն	52	51.61	5	0.74	3	0.79	27	1.83	168	128.41	0	0.00	76	8.36	4	0.20
Արարատ	71	132.03	1	0.01	37	3.08	54	0.81	161	109.53	1	0.08	142	11.73	15	0.44
Արմավիր	34	108.86	2	0.08	1	0.05	18	1.17	341	479.59	1	0.29	140	14.35	9	0.83
Գեղարքունիք	12	8.56	1	1.00	23	2.78	12	0.23	128	90.76	1	11.69	53	5.87	6	1.13
Լոռի	15	3.43	3	0.18	16	0.76	51	0.82	274	254.44	0	0.00	58	39.75	17	0.39
Կոտայք	48	98.04	4	5.47	74	6.85	76	1.61	284	151.55	2	3.55	261	24.34	33	0.94
Շիրակ	12	22.85	5	0.88	38	0.92	48	3.83	90	90.59	0	0.00	36	4.00	2	0.04
Սյունիք	25	31.24	0	0.00	3	0.05	11	0.36	73	66.15	1	0.10	28	1.96	6	0.13
Վայոց Ձոր	28	67.17	0	0.00	7	0.58	13	0.58	33	28.38	0	0.00	14	1.11	12	0.86
Տավուշ	4	2.68	0	0.00	22	1.88	16	0.62	80	21.52	2	0.04	29	1.94	3	0.11
Ընդամենը	301	526.47	22	8.39	289	23.72	339	12.34	1643	1424.21	11	15.81	960	121.15	131	5.95

Ստորև ներկայացվում է 2011թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	19	0.79	1	0.03	8	0.34	10	0.42	60	5.71	0	0.00	0	0.00	57	5.64	3	0.07
Արագածոտն	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	82	54.64	50	51.29	5	0.74	3	0.79	24	1.82
Արարատ	9	0.36	0	0.00	3	0.19	6	0.17	154	135.58	71	132.03	1	0.01	34	2.90	48	0.64
Արմավիր	4	0.04	1	0.03	0	0.00	3	0.01	50	109.9	33	108.64	1	0.05	1	0.05	15	1.16
Գեղարքունիք	3	1.30	0	0.00	2	1.28	1	0.02	44	11.26	11	8.54	1	1.00	21	1.50	11	0.22
Լոռի	19	0.37	1	0.07	3	0.19	15	0.11	65	4.76	14	3.37	2	0.11	13	0.57	36	0.71
Կոտայք	26	2.50	0	0.00	15	2.31	11	0.19	171	108.83	43	97.39	4	5.47	59	4.55	65	1.42
Շիրակ	27	0.72	1	0.02	12	0.19	14	0.51	75	25.95	11	21.05	4	0.86	26	0.72	34	3.32
Սյունիք	3	0.07	0	0.00	2	0.03	1	0.04	35	31.32	24	30.97	0	0.00	1	0.02	10	0.33
Վայոց Ձոր	4	0.054	0	0.00	2	0.05	2	0.004	42	63.21	26	62.11	0	0.00	5	0.53	11	0.57
Տավուշ	12	1.00	0	0.00	4	0.42	8	0.58	30	4.17	4	2.68	0	0.00	18	1.45	8	0.04
Ընդամենը	129	7.21	4	0.15	51	5.00	74	2.06	808	555.33	287	518.07	18	8.24	238	18.72	265	10.30

Հանրապետությունում 2011թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 14 գործարքներ /8.40 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. չորրորդ եռամսյակում, 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 15.2%-ով Ընդ որում, Երևանում աճել է 3.5 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 9.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 64.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 24.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 11.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 18.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2011թ. չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	39	44.87	37.4	2643.0	301.7	93	58.69	365.0	12000.0	4191.7
Ապարան						9	2.68	86.5	2727.3	674.5
Թալիին	11	6.42	34.6	883.3	272.0	48	32.20	93.6	5494.5	557.7
Ծաղկահովիտ						12	31.49	79.5	1000.0	228.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	26	35.73	68.7	4515.5	1344.4	42	52.39	335.1	10833.3	2547.8
Մասիս	21	51.48	61.3	1002.5	168.2	55	20.08	200.0	11904.8	3030.3
Վեդի	24	44.81	65.4	2937.7	984.7	64	37.06	207.0	10795.1	1683.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	14	39.16	63.0	3197.5	289.6	180	123.56	294.3	9090.0	1562.1
Բաղրամյան	15	62.70	35.4	70.9	60.0	56	266.06	90.6	2561.1	733.4
Վաղարշապատ	4	6.77	72.4	3387.1	2109.8	103	89.31	444.4	11764.7	2859.7
<b>Գեղարքունիքի մարզ</b>										

Գավառ						55	23.32	199.8	1875.0	383.1
Ճամբարակ	3	3.94	132.0	1357.2	935.5	19	15.77	60.5	953.3	325.0
Մարտունի	2	1.46	407.0	677.7	542.4	14	4.03	51.1	2850.0	711.7
Սևան	4	2.06	185.5	1221.0	682.4	9	6.50	52.2	2134.8	309.1
Վարդենիս	2	1.08	460.0	4142.9	2301.5	31	41.14	41.2	2575.1	352.9
Լոռու մարզ										
Այվազ	5	0.72	214.9	2442.0	1549.6	22	9.31	170.4	6424.2	716.5
Գուգարք	6	1.86	200.1	10000.0	5261.8	12	3.40	234.6	6065.9	791.8
Սպիտակ	3	0.79	90.1	812.0	433.5	3	1.62	250.0	5555.5	718.9
Ստեփանավան						13	12.57	90.6	1686.6	286.3
Տաշիր						106	102.24	45.3	1384.4	137.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	14	21.29	69.4	1767.0	492.9	97	38.62	279.3	11942.7	4670.0
Եղվարդ	23	59.38	14.9	1215.6	388.0	117	74.47	174.4	11971.8	2980.2
Հրազդան	6	16.73	326.1	1053.6	877.3	51	27.31	130.5	10256.4	2025.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	3.00	373.0	373.0	373.0	29	28.90	252.0	1693.1	582.2
Ամասիա	6	11.95	118.7	357.0	181.5	4	9.35	40.9	261.0	129.5
Անի	1	2.10	269.1	269.1	269.1	24	26.39	110.6	546.9	366.2
Աշոգք	3	4.00	74.2	112.5	93.4	10	8.74	58.5	215.8	118.6
Արթիկ						23	17.21	79.4	1428.6	362.7
Սյունիքի մարզ										
Գորիս						7	5.88	92.6	1023.2	681.5
Կապան	14	20.51	28.3	1135.8	373.2	5	3.49	120.0	841.6	327.3
Մեղրի	6	7.51	484.0	880.0	677.0	14	2.10	193.0	3000.0	710.1
Սիսիան	4	2.95	117.7	135.0	130.7	47	54.69	46.3	1977.4	477.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	28.42	44.7	632.9	106.4	31	27.58	125.0	10000.0	1861.3
Վայք	15	33.69	68.9	170.0	121.0	2	0.80	58.8	1430.7	595.2
Տավուշի մարզ										
Բերդ						60	8.60	213.3	3783.8	664.3
Իջևան	4	2.68	157.1	929.4	420.9	6	0.99	267.5	9454.5	1219.8
Նոյեմբերյան						14	11.92	46.7	7368.4	818.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տնտեսագործությունից և հողատնայինից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2011թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Եվագագույն	Առավելագույն	Միջին			Եվագագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						57	54415.0	130.7	22200.0	2572.6
Ապարան	1	2500.0	330.0	330.0	330.0	9	18147.0	124.1	609.6	352.5
Թալին						3	3546.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ	2	5400.0	86.4	86.4	86.4	4	4440.0	60.0	214.3	86.0
Արարատի մարզ										
Արտաշատ	20	19955.0	351.3	545.4	452.1	23	19745.0	173.9	7140.3	894.0



Մալխ	13	8335.0	578.0	1989.0	1323.6	88	63708.0	187.5	25000.0	1212.6
Վեղի	1	661.0	832.1	832.1	832.1	30	33203.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	450.0	2200.0	2200.0	2200.0	55	62997.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						5	5729.0	100.0	833.3	230.0
Վաղարշապատ						78	71182.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	9	7460.0	266.8	284.9	276.7	8	7290.0	186.6	1084.3	624.8
Ճամբարակ	9	5291.0	144.4	267.0	224.2	8	5748.0	71.3	2286.2	148.5
Մարտունի	3	2232.0	61.7	219.8	132.5	32	35296.5	119.3	5000.0	277.2
Սևան								240.0	3110.4	295.0
Վարդենիս						5	10348.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի	2	74.0	609.5	977.5	793.5	5	5350.0	114.3	1388.9	215.3
Գուգարք	8	4493.0	80.0	2009.7	1036.3	13	8591.0	77.9	14083.3	1042.5
Սալիտակ	2	1077.0	148.0	273.8	210.9	34	374526.0	104.9	1348.3	204.2
Ստեփանավան						5	7750.0	88.2	1666.7	175.3
Տաշիր	1	56.0	436.3	436.3	436.3			45.3	400.0	89.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	2576.0	826.0	4977.2	3664.5	111	98952.5	264.5	35353.5	1961.4
Եղվարդ	51	40322.0	891.0	5037.5	2111.5	117	105958.0	173.6	27000.0	2841.0
Ջրագոյան	3	2556.0	279.3	4976.4	3335.3	26	32237.0	117.7	34848.5	1321.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	11	1702.0	1335.7	10184.8	5114.2	12	9974.4	113.6	18750.0	331.5
Ամասիա	2	999.0	150.0	150.0	150.0			45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	500.0	528.0	507.0	5	6570.0	67.9	180.6	156.7
Աշոցք						2	8180.0	40.8	144.0	62.4
Արթիկ	10	3339.4	158.4	5350.0	1213.2	17	15290.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						9	5251.0	112.2	1700.0	370.9
Կապան	1	220.5	2608.9	2608.9	2608.9	5	3785.0	67.9	2638.9	291.6
Մեղրի						13	9171.0	68.5	632.9	187.3
Սիսիան						1	1350.0	123.5	875.0	191.0
Վայոց Ձորի մարզ										
Եղնիզաձոր	5	5254.0	38.0	1492.9	593.7	13	10817.0	96.7	7659.6	498.2
Վայք						1	321.0	120.7	1448.3	198.2
Տավուշի մարզ										
Բերդ						1	1300.0	75.8	810.0	109.4
Իջևան	17	14219.0	156.3	3000.0	2124.4	26	17029.0	74.1	14423.1	516.9
Նոյեմբերյան	1	320.0	246.9	246.9	246.9	2	1110.0	125.0	1948.1	219.1

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 22 գործարքներ 6.65 հա մակերեսով, ընդ որում 3-ական՝ /0.42 հա/ Լոռու, /1.16 հա/ Տավուշի, 4-ը՝ /0.30հա/ Վայոց Ձորի, 10-ը՝ /1.36 հա/ Կոտայքի և 2-ը՝ /3.41 հա/ Շիրակի մարզերում:

2011թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2133 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 87.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. չորրորդ եռամսյակում, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 14.6%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է՝ 13.2%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 134 բնակարանների, 70 անհատական բնակելի տների, 1014 հասարակական նշանակության, 140 արտադրական նշանակության օբյեկտների, 745 միավոր /6648.63 հա/ հողերի և 30 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի

կառուցապատման, անհատույց օգտագործման և սնրվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 36 վարձակալության գործարքների, այդ թվում 22 միավոր /0.02 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 20.0%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 5.3%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 6648.63 հա հողերից 14.44 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 6634.19 հա հողերի 405.00 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 33.42 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 2614.24 հա, որից 2454.26 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 5137.35 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	17	275.18
Արարատ	17	97.00
Արմավիր	30	98.97
Գեղարքունիք	43	202.94
Լոռի	49	422.46
Կոտայք	10	16.62
Շիրակ	10	14.52
Սյունիք	88	1494.58
Վայոց Ձոր	38	2454.26
Տավուշ	15	60.82
<b>Ընդամենը</b>	<b>317</b>	<b>5137.35</b>

2011թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7941 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.4%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 28.9%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 8.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են քաղաքային բնակելի շենքերի բնակարանների /40.6%/, առանձնատների /23.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.8%/ և հողերի /21.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3351 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 12.3%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 11.8%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 2101.69 հա հողեր, որից 107.98 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 53.5%-ը, կամ 1124.33 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.32 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Լոռու մարզում՝ 783.76 հա:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 693 գործարքներ, որից 477-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 82.5%-ն իրականացվել են քաղաքային բնակելի շենքերի բնակարանների, 12.7%-ը՝ անհատական բնակելի տների, 2.6%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.9%-ը՝ հողերի, 0.7%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ այգետնակների և 0.1%-ն՝ ավտոտնակների նկատմամբ: 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է

18.7%-ով, ընդ որում Երևանում՝ 12.0%-ով, մարզերում միասին վերցրած՝ 36.7%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 39.4%-ով, ընդ որում Երևանում՝ 31.4%-ով, մարզերում միասին վերցրած՝ 61.2%-ով:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման 10 /7-ը՝ Սյունիքի, 2-ը՝ Գեղարքունիքի, 1-ը՝ Արագածոտնի, մարզերում/ գործարք է արձանագրվել, որի քանակը, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 10.0 անգամ, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 2.5 անգամ:

2011թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 11932 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 60.8%-ով, իսկ 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 47.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 21.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.3%/:

***ՆՆ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***